



Co-funded by the Erasmus+ Programme of the European Union



### Դասախոսների վերապատրաստման դասընթացի ծրագիր

ԲՈՒՀ-իանվանումը	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (ՀԱՊՀ)
Վերապատրաստման դասընթացի անվանումը	Ակտիվ ուսուցումը շրջված լսարանում
Վերապատրաստող (ներ)ի անուն(ներ)ը Ինստիտուտը/Ֆակուլտետը և ամբիոնը  Պաշտոնը  Էլ. հասցեն Հեռախոսահամարը	Vahram Muradyan  Էլեկտրաէներգետիկական, ինֆորմացիոն և ավտոմատացված համակարգերի ամբիոն  ասիստենտ  <a href="mailto:vahrammur@gmail.com">vahrammur@gmail.com</a>  (+374 95) 940 949
Հանդիպման օրերը և ժամերը Վայրը/ լսարան(ներ)ը	11.03.2019, 15.03.2019, 18.03.2019, 22.03.2019, 25.03.2019 15 <sup>00</sup> -17 <sup>00</sup> Գյումրի մասն. լսարան
Ուսումնական բեռնվածությունը	10 ժամ, մասնավորապես օրեկան 2 լսարանային ժամ x 5 օր
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է բացահայտել ակտիվ ուսուցման հայեցակարգի էությունը, մատնանշել ակտիվ ուսուցման հիմնական ռազմավարությունն ու մեթոդները և «Շրջված լսարան» (Flipped Classroom)-ի կիրառման սկզբունքները՝ որպես ակտիվ ուսուցման մոտեցում:
Կրթական վերջնաբերությունները (ԿՎ)	<ul style="list-style-type: none"> <li>• Հասկանալ «Ակտիվ ուսուցում» և «Շրջված լսարան» մեթոդաբանությունները:</li> <li>• Համեմատել և հակադրել/համադրել «Ակտիվ ուսուցումը» և «Շրջված լսարանը» ուսուցման ավանդական մեթոդների հետ:</li> <li>• Բացահայտել «Ակտիվ ուսուցման» և «Շրջված լսարանի» առավելությունները և սահմանափակումները:</li> <li>• Ավելացնել մանկավարժական-տեխնոլոգիական (տեղեկա-</li> </ul>

	<p>տվական տեխնոլոգիաների կիրառման) կարողությունները:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մշակել կամ վերամշակել առարկայական ծրագրերը՝ կիրառելով «Ակտիվ ուսուցման» և «Շրջված լսարանի» մեթոդաբանությունները:</li> </ul>
<p>Դասընթացի մեթոդաբանությունը/ դասավանդման ձևերը</p>	<p>Դասընթացն իրենից ներկայացնում է 10 ժամյա ինտենսիվ ուսուցում: Յուրաքանչյուր թեման սկսում է հակիրճ ներածական ներկայացմամբ, հիմնական ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել գույգերով կամ փոքր խմբերով գործնական աշխատանքներ՝ նպատակաուղղված ուսուցման գործիքների և սեփական դասընթացի մշակմանը:</p> <p>Դասընթացի ուսուցումը ներառում է 4 փուլեր.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ակտիվ մասնակցություն սեմինարներին և գործնական աշխատանքներին,</li> <li>2. թվային (տեղեկատվական) տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման կազմակերպման և իրականացման գործառույթում՝ որպես ակտիվ ուսուցում,</li> <li>3. ուսուցման և դասավանդման գործընթացում ուսանողների նախապատրաստմանն աջակցող թվային նյութերի մշակում և զարգացում,</li> <li>4. ընդհանուր դասընթացի (առարկայական ծրագրի) ամբողջական մշակում թվային գործիքների և միջոցների կիրառմամբ՝ որպես ակտիվ ուսուցման մեթոդի իրականացում:</li> </ol> <p>Որպես ամփոփիչ հանձնարարություն՝ իրականացվում է թվային մեթոդների կիրառմամբ մշակվախ առարկայական ծրագրի սլայդային ներկայացում՝ բոլոր մասնակիցների ակտիվ քննարկմամբ:</p>
<p>Առաջարկվող ուսումնական նյութերը</p>	<p>Դասավանդման նյութերի ցանկի տրամադրում՝ ներառյալ ցանկացած էլեկտրոնային-հասանելի/առցանց նյութերը LiU PRINTEL-ի կայքէջում. web, library և այլն: Այլ գործիքամիջոցների ցանկը՝ ներառյալ էլեկտրոնային ռեսուրսներ և ծրագրային գործիքներ, որոնք անհրաժեշտ են դասավանդողներին:</p>
<p>Հիմնական տեխնիկական/ մեդիապահանջները</p>	<p>Անհրաժեշտ ցանկացած սարքավորումների ցանկ (օրինակ, PC, Tablet, Laptop, Smartphone և այլն) և ինտերնետ միացում կամ համապատասխան ծրագրային ապահովում (օրինակ, Padlet, Slido, Panopto, Mentimeter և այլն):</p>
<p>Որակի ապահովումը</p>	<p><b>Ֆորմալ գնահատում.</b> դասընթացի ընթացքում վերապատրաստողների կողմից սեմինարներին և անդրադարձներին (քննարկումներին) մասնակցության գնահատում:</p> <p>Ամփոփիչ գնահատում. լսարանային դասընթացից առաջ և հետո առարկայական ծրագրի նախագծի համեմատական գնահատում, ամփոփիչ պրեզենտացիայի գնահատում:</p>

### Դասընթացի ընդհանրական պատկերը/բովանդակությունը

Վերապատրաստման օրերը	Հիմնական թեմաները	Ուսումնառման գործողությունները	Հանձնարարությունները
<b>1-ին օր</b> 11.03.2019 15 <sup>00</sup> -17 <sup>00</sup> ք.Գյումրիի մասն. լսարան	<ul style="list-style-type: none"> <li>«Ակտիվ ուսուցում» ներածություն: Ակտիվ ուսուցման հայեցակարգի և մեթոդների հակիրճ ներկայացում:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>ուսուցում,</li> <li>քննարկում, վերլուծություն,</li> <li>մեթոդների համեմատություն,</li> <li>ամփոփում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Փոքր խմբերով #1 առաջադրանքի կատարում. TET-SAT</li> </ul>
<b>2-րդ օր</b> 15.03.2019 15 <sup>00</sup> -17 <sup>00</sup> ք.Գյումրիի մասն. լսարան	<ul style="list-style-type: none"> <li>«Շրջված լսարան» ներածություն: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնական նյութերի մշակում:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>ուսուցում,</li> <li>համագործակցություն, վերլուծություն, քննարկում</li> <li>մեթոդների համեմատություն,</li> <li>գործնական առաջադրանքի կատարում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Փոքր խմբերով #2 առաջադրանքի կատարում. Padlet</li> </ul>
<b>3-րդ օր</b> 18.03.2019 15 <sup>00</sup> -17 <sup>00</sup> ք.Գյումրիի մասն. լսարան	<ul style="list-style-type: none"> <li>ABC մեթոդի սեմինար. ABC մեթոդով դասընթացի մշակում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>ուսուցում,</li> <li>«Ուղեղի գրոհում» (Brainstorm),</li> <li>ABC մեթոդի կիրառմամբ գործնական աշխատանք</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Փոքր խմբերով #3 առաջադրանքի կատարում. ABC մեթոդի կիրառման գնահատում</li> </ul>
<b>4-րդ օր</b> 22.03.2019 15 <sup>00</sup> -17 <sup>00</sup> ք.Գյումրիի մասն. լսարան	<ul style="list-style-type: none"> <li>DEF մեթոդի ներկայացում. DEF մեթոդով դասընթացի մշակում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>ուսուցում,</li> <li>ABC մեթոդի կիրառմամբ դասընթացի որևէ հատվածի վերամշակում (գործնական աշխատանք)</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Անհատական #4 առաջադրանքի կատարում. դասընթացի մշակում կամ վերամշակում DEF մեթոդով</li> </ul>
<b>5-րդ օր</b> 25.03.2019 15 <sup>00</sup> -17 <sup>00</sup> ք.Գյումրիի մասն. լսարան	<ul style="list-style-type: none"> <li>Մշակված/ վերամշակված դասընթացի ներկայացում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>վերամշակված դասընթացի (կամ մասի) սլայդային ներկայացում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Ամփոփիչ ներկայացում և գնահատում</li> </ul>